ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/158/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 08 հուլիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի հուլիսի 8-ին, քննելով «5165 ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) պաշտոնատար անձ Մենուա Անդրանիկի Սողոմոնյանի կողմից 2023 թվականի հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ նաև՝ Տարեկան հաշվետվություն) օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/158/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով վերապահված գործառույթը, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ 2023 թվականի Կուսակցության Տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակվել:

1.2 Վերոնշյալ խախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2024 թվականի հունիսի 13-ի թիվ 01/1858/15-2024 գրությամբ Կուսակցության պաշտոնատար անձ Մենուա Անդրանիկի Սողոմոնյանին է ներկայացրել ծանուցում Տարեկան հաշվետվությունը սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու առերևույթ խախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով մասնակցելու Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

1.3 2024 թվականի հուլիսի 1-ին Կուսակցության պատշաճ ծանուցված պաշտոնատար անձ Մենուա Անդրանիկի Սողոմոնյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 306/2024 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովը 2024 թվականի հունիսի 13-ին Կուսակցության պաշտոնատար անձ Մենուա Անդրանիկի Սողոմոնյանին է հասցեագրել թիվ 01/1858/15-2024 գրությունը՝ վերջինիս հրավիրելով 2024 թվականի հուլիսի 8-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցության համար: Մենուա Անդրանիկի Սողոմոնյանի կողմից նշված գրությունը ստացվել է 2024 թվականի հունիսի 18-ին:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Մենուա Անդրանիկի Սողոմոնյանի ներկայությամբ 2024

թվականի հուլիսի 8-ին՝ ժամը 16:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակիցը սույն գործի քննության ժամանակ ներկայացրել է պարզաբանում, որի համաձայն՝ Կուսակցության Տարեկան հաշվետվությունը հրապարակվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, սակայն տեխնիկական խնդրի առկայությամբ պայմանավորված որևէ նյութ չի կցվել, ինչի հետևանքով կատարվել է վարույթի մասնակցի կողմից երկրորդ հրապարակում, որի դեպքում առկա է կցված նյութը, սակայն անստորագիր տարբերակով, ինչը նույնպես տեխնիկական խնդրի առկայությամբ է պայմանավորված:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/158/2024 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Կուսակցության պաշտոնատար անձ Մենուա Անդրանիկի Սողոմոնյանը 2023 թվականի Կուսակցության Տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել Հանձնաժողով և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակել:

3.2 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցամատյանում առկա տեղեկատվության համաձայն՝ Մենուա Սողոմոնյանը հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի

Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը:

4.2 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող **մայիսի 31-ից ոչ ուշ**, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը:

4.3 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունն իր հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Հանձնաժողով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար,

որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

4.12 Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն

իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կայացված որոշումներին, մասնավորապես՝ Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ նշված իրավակարգավորմամբ նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով քննության իրավասությունը Հանձնաժողովին վերապահելուց հետո, նշված դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և նշված խախտման կապակցությամբ ծանուցում է ներկայացվել առաջին անգամ, ինչպես նաև մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը ներկայացվել են Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը: Վերոնշյալ հանգամանքների համակցությամբ պայմանավորված՝ Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնելու արդյունքում, Հանձնաժողովն արձանագրել է, որ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Սույն գործով առկա փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերով ներկայացված հանգամանքներից, այն առումով, որ սույն դեպքում վարույթի մասնակցի կողմից թեև միջոցներ ձեռնարկվել են Կուսակցության Տարեկան հաշվետվությունը հրապարակման ներկայացնելու ուղղությամբ (2024 թվականի մայիսի 30-ին ներկայացվել է հրապարակման), սակայն տեխնիկական խնդրի (էլեկտրոնային ստորագրության բացակայություն), առկայությամբ պայմանավորված նյութը չի կցվել ինչը խաթարել է գործնթացի բնականոն ընթացքը՝ այն է՝ Հանձնաժողով ներկայացնել Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույց: Ուստի, Հանձնաժողովն արձանագրում է, որ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը Հանձնաժողով չեն ներկայացվել Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը: Սույն դեպքում էական է գնահատվել նաև

այն հանգամանքը, որ Կուսակցության՝ 2022 թվականի տարեկան հաշվետվությունը և հրապարակման փաստը վկայող ապացույցը սահմանված ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու հիմքով Մենուա Սողոմոնյանի նկատմամբ հարուցվել էր թիվ ՎԻՎ/26/2023 գործով վարույթը, որը եզրափակվել էր 2023 թվականի դեկտեմբերի 14-ին նվազ նշանակության կիրառման հիմնավորմամբ կարճման որոշման ընդունմամբ: Նշված որոշման հիմք էր հանդիսացել այն հանգամանքը, որ վարույթի մասնակցի նկատմամբ նշված դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և նշված խախտման կապակցությամբ ծանուցում էր ներկայացվել առաջին անգամ, ինչպես նաև մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը ներկայացվել են 2022 թվականի տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը: Նշվածի համատեքստում սույն վարույթի մասնակցի հակահիրավական վարքագիծը փաստացի կրկնվել է, ավելին՝ թեև վերջինիս կողմից միջոցներ ձեռնարկվել են Կուսակցության Տարեկան հաշվետվությունը հրապարակման ներկայացնելու ուղղությամբ, այնուամենայնիվ, մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը Տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը փաստացի Հանձնաժողով ներկայացված չեն եղել: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդուհանդերձ վարույթի մասնակցի կողմից Կուսակցության Տարեկան հաշվետվության հրապարակման ուղղությամբ քայլեր ձեռնարկված են եղել՝ Հանձնաժողովը վերջինիս կողմից կրկին անգամ սահմանված ժամկետում օրենքով իրեն վերապահված պարտականությունը չկատարելը չի դիտարկել որպես Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը հաստատված է համարում այն հանգամանքը, որ առկա է Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն

կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցամատյանում առկա տեղեկատվության համաձայն՝ Մենուա Սողոմոնյանը հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ վարույթի մասնակից Մենուա Սողոմոնյանը ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար:

Հաշվի առնելով, որ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման (արարքի) բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «5165 ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին 2023 թվականի Տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու համար Մենուա Անդրանիկի Սողոմոնյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի՝ ***40 000 ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մենուա Անդրանիկի Սողոմոնյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**